Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-877[4]-22.10.2015,03.11.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 8-րդ մասում «հաշվարկում և վճարում են ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ)» բառերը փոխարինել «ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկում և վճարում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասում «հարկային պարտավորությունների» բառերը փոխարինել «եկամտային հարկի պարտավորության» բառերով:

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի 2-րդ կետը «գործակալի վրա» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի նախավերջին պարբերությունում նշված դեպքերում» բառերով, իսկ 2-րդ մասի 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

2) 5-րդ մասում «1-ամսյա ժամկետում» բառերը փոխարինել «մինչև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը» բառերով:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում «մայիսի 1-ից» բառերը փոխարինել «ապրիլի 20-ից» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների և փոփոխությունների

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Կատարված փոփոխությունները**
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից շահագործվող հին սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաներով փոխարինելու վերջնաժամկետը 2016 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանել 2017 թվականի հունվարի 1-ը:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է հարկ վճարողներին թույլ տալ շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նրանց փոխկապակցված անձինք որևէ գործունեություն չեն իրականացրել:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: